Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ՀՀ Արարատի մարզի «Ոսկետափի Ս. Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ դասվար

Թեմա՝ Դպրոցականների ազգային-հոգևոր դաստիարակության հիմնախնդիրը դասղեկի ժամերին

Վերապատրաստող, մենթոր՝ Կարինե Ավետիսյան

Ուսուցիչ՝ Օֆելյա Մելքումյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ……4
1.1. «Հոգևոր» և «հոգևոր զարգացում» հասկացությունների հոգեբանա-մանկավարժական և փիլիսոփայական հիմունքները……4
1.2.Հայ մանկավարժական միտքը և անձի հոգևոր զարգացումը……5
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ……8
2.1.Դաստիարակության նպատակն ու խնդիրները……8
2.2. Սովորողների ազգային-հոգևոր դաստիարակության զարգացման միջոցները դասղեկի ժամերին……9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն զարգացման, համաշխարհայնացման հետ կապված՝ նվազում է աճող սերնդի հետաքրքրությունն ազգային ակունքների, պատմության, լեզվի, մշակութային արժեքների, ազգային ավանդույթների, սովորույթների նկատմամբ:Նշված գործոններն արդիական են դարձնում աճող սերնդի ազգային-հոգևոր զարգացումը համաշխարհայնացման, աշխարհաքաղաքական տեղաշարժերի և միջազգային հանրությանն ինտեգրման համատեքստում:

Ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրն է սովորող երիտասարդության մեջ արժեքային վերաբերմունք ձևավորել ազգի, նրա մշակույթի նկատմամբ, նպաստել ազգային-հոգևոր զարգացմանը համամարդկային արժեքներին հաղորդակցման գործընթացի, միջմշակութային երկխոսության հմտությունների, այլ մշակույթների նկատմամբ հարգանքի, ազգամիջյան հարաբերությունների մշակույթի զարգացման զուգակցմամբ:

Հետազոտության նպատակն է բացահայտել դասղեկի ժամերի ընձեռած հնարավորություններն ազգային-հոգևոր դաստիարակության համատեքստում:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել «հոգևոր» և «հոգևոր զարգացում» հասկացությունները բարոյական, գեղագիտական, կրոնական, փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական տեսանկյուններից:
2. Առաջարկել ազգային-հոգևոր դաստիարակության միջոցներ և հիմնավորել դրանց կիրառման մանկավարժական արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կառուցված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ավարտական աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային 17 էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

1.1. «Հոգևոր» և «հոգևոր զարգացում» հասկացությունների հոգեբանամանկավարժական և փիլիսոփայական հիմունքները

«Հոգևոր» հասկացության նկատմամբ դասական-պատմական և ժամանակակից մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս նրա կարևորությունը ինչպես գիտական, այնպես էլ բարոյական, գեղագիտական, փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական և կրոնական տեսանկյուններից:

Հոգևորը բնորոշվում է իբրև բարոյական հատկանիշների և արժեքների հանրագումար, անձի բարձր մարդասիրության որակական հատկանիշների, նյութական և հոգևոր արժեքների միասնության համակցական դրսևորում:

Քննելով հոգևորի պակասը՝ ոչ միշտ ենք լիովին գիտակցում, որ դրա զարգացման համար պարարտ հող է հոգեկան հատկանիշների բացակայությունը, այսինքն՝ հոգու, զգացմունքային ապրումների ոչ բավարար զարգացվածությունը խոչընդոտում է հոգևորի լիարժեք դրսևորմանը:

Հոգևոր զարգացման որոշակի մակարդակում ապրումներն ու զգացմունքները դառնում են առաջնորդվելու ունակություն, ճշմարիտ իդեալներին ձգտելու հետևողականություն, հակում դեպի ստեղծագործ կյանքը, բարին և գեղեցիկը, ներդաշնակը, կատարյալը, ստեղծագործ աշխատանքում ազնիվ մղումների և ներքին հնարավորությունների առավելագույնս ներդնում:

Մարդու հոգևոր կատարելագործման խնդրին դեռևս վաղնջական ժամանակներում անդրադարձել են հույն մտածողները: Պլատոնը մարդկային հոգու կառուցվածքի մեջ տարբերում է «երեք ունակություն՝ մտավոր, կամային և աֆեկտիվ: Հոգու եռյակ կազմությամբ որոշվում են հիմնական առաքինությունները՝ իմաստությունը, արիությունը և առաքինությունը»:[1]

---

1. Տե՛ս Պլատոն, Երկեր չորս հատորով, հատոր IV, -Եր .: Անտարես հր., 2017, էջ 73:

Արիստոտելի ուսմունքում ևս բարոյական կատարելությունը դիտվում է որպես հազվագյուտ ձեռքբերում: Ըստ նրա ուսմունքի՝ մարդ պետք է ծնվի այն ձգտումով, որ ոչ թե նյութականն է մարդկային կյանքի ճշմարիտ բովանդակությունը, այլ՝ հոգևորը:

Հոգևոր զարգացման սահմանման գործում անառարկելի ավանդ են ներդրել շատ հոգեբաններ: Այսպես՝ Ս.Լ. Ռուբինշտեյնը կարծում է, որ մարդու հոգևոր զարգացումը արտահայտվում և իրականացվում է մարդու գործունեության մեջ, նրա տեսական և գործնական ոլորտում:

Ըստ Լ.Ն. Տոլստոյի՝ հոգևորը մարդու ինտելեկտուալ և զգայական հնարավորությունների խտացումն է, որը գիտակցականությամբ և գործունեությամբ հասնում է կեցության լիարժեքության:

1.2.Հայ մանկավարժական միտքը և անձի հոգևոր զարգացումը

Մանկավարժության մեջ դաստիարակությունը դիտարկվում է որպես մասնակցություն անձի ինքնադրսևորմանը, ուստի և հոգևոր զարգացման գործում շեշտը դրվում է անհատի ներուժի արթնացմանը, ինքնակատարելագործվելու ունակությանը, հոգևոր պահանջմունքների և արժեքների առաջնայնությանն ու հրատապությանը:

Անձի հոգևոր զարգացման հիմնախնդիրը եղել է նաև հայ մանկավարժական մտքի խոր ուսումնասիրության առարկան, հայ ազգային դպրոցի կարևորագույն խնդիրը: Հայ մանկավարժական մտքի շատ ուշագրավ էջեր նվիրված են մատաղ սերնդի՝ ազգային ակունքներից բխող հոգևոր զարգացման խնդիրներին:

Ազգային-հոգևոր դաստիարակության գործում անգնահատելի է Մեսրոպ Մաշտոցի հայապահպան գործունեությունը: «Եթե հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական միասնությունն ամրապնդելուն նվիրած անդուլ գործունեությամբ ու մեծամեծ ջանքերով, այդ նպատակին հասնելու համար հայկական գրի ու գրականության ստեղծման գործում ցուցաբերած հետևողական ու անխոնջ պրպտումներով Մեսրոպ Մաշտոցը հանդես է գալիս որպես իր ժողովրդին նվիրված

անձնուրաց քաղաքական-գաղափարական գործիչ, ապա հայկական գրի ստեղծումով նա իրեն դրսևորում է որպես մեծ գիտնական: Իր կատարելությամբ հայկական գիրը, իրոք, հանճարեղ մտքի ծնունդ է: Այդ գործը ավարտելով՝ Մեսրոպը հայ ժողովրդին նվիրեց իր հոգեկան կերտվածքի բյուրեղացման, իր մշակույթի զարգացման հզոր մի զենք»,- գրում է Է. Աղայանը: [2]

Սահակ-մեսրոպյան դպրոցաշինության շնորհիվ Հայոց աշխարհում սփռվեց այն հոգևոր հուրը, որը խանդավառեց բոլորին, և դպրության հուրը բորբոքեց բոլոր գավառներում: Հայ մանուկներն ու պատանիները սովորում էին հայոց լեզու և գրականություն, քերականություն, վարքագրություն, պատմություն, դավանաբանություն, գրչության արվեստ, ճարտասանություն, սրբազան երաժշտություն, տրամաբանություն: Այս թվարկումն ինքնին վկայում է, թե ինչպիսի հոգեկրթիչ ծրագրեր ունեին հայոց կրթարանները:

Հայ մանկավարժական մտքի պատմության արշալույսին մեկը մյուսին հաջորդում են կարկառուն դեմքեր, որոնցից յուրաքանչյուրը վիթխարի ավանդ ունի իր ժամանակի երիտասարդության կրթության և ազգային-հոգևոր դաստիարակության գործում:

Մեծ մտածող, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Տաթևացին հայ ազգային-հոգևոր նկարագիրը անխաթար պահելու համար հեղինակել է պատմափիլիսոփայական, դավանաբանական, մշակութային, մանկավարժական աշխատություններ, որոնք խորությամբ արտացոլում են հայկական հոգևոր-մշակութային արժեքները, ազգային բնավորությունը, հայ էթնոսի ամբողջական պատմական դիմագիծը:

Ազգային և հոգևոր վերածննդի գործում անգնահատելի է դպրոցաշինական գործի ականավոր ներկայացուցիչ Ստ. Նազարյանի ավանդը. նրա ազգապահպան հայացքները ամրապնդեցին հայ ազգային դպրոցի գաղափարական հիմքերը: «Հայոց կյանքի վերանորոգությունը,- գրում է նա,- պիտի սկսանի ժողովրդական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսավորության, ամենայն ազգային առաջադիմության»:[3]

---

2. Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (5-18-րդ դարեր),-Եր.: Երևանի համալսարանի հր., 1976, էջ 14:

3. Տե՛ս Հայ մանկավարժներ (կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա. Շավարշյան), Գիրք Ա,- Եր.: Հայպետուսմանկհրատ., 1958, էջ 199:

Ստ. Նազարյանը ազգային դաստիարակության գործում առաջնային է համարում մայրենի լեզվի և մտածողության փոխկապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը՝ դրանց արդյունավետ զարգացումը դիտարկելով ընդհանուր կրթության, ազգային դաստիարակության և հոգևոր զարգացման միասնական գործընթացում, որը հնարավոր է իրականացնել միայն ազգային մշակույթի հիման վրա:

Դեռևս հնագույն ժամանակներից կերտելով իր պատմությունն ու ազգային մշակույթը՝ հայ ազգը դրանցում արտացոլել է իր ազգային բնավորությունը, խառնվածքը, ինքնագիտակցությունը, մտածելակերպը, ինքնությունը, աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը: Հայոց արժեհամակարգն իր յուրահատուկ արտահայտությունն է ստացել ճարտարապետության մեջ, շինարարական արվեստում, փիլիսոփայության, բանահյուսության, երաժշտության, մանկավարժության, մատենագրության մեջ, քերթողական արվեստում, ազգային-ընտանեկան կյանքի նորմերում, լեզվում, դավանանքում, նյութական և հոգևոր այլ ոլորտներում: Հայ ազգի մշակութային ժառանգության մեջ իր ուրույն դերն ու գործառույթներն ունեն ազգային-հոգևոր կառույցները: Ժամանակակից աշխարհում իրականացող գլոբալացման գործընթացում ձևավորվող բազմամշակութային միջավայրում, թվում է, հետին պլան են մղվում ազգային մշակույթները, համազգային, հոգևոր-բարոյական, գեղագիտական, ճանաչողական արժեքները, պատմական հիշողությունը, մտածողությունը, սակայն դա թյուր կարծիք է: Ազգային մշակույթը ժամանակի փորձությանը, հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու հզոր գործոն է. մշակույթի մեջ են ամփոփված ազգապահպան ռազմավարությունները: Ազգային մշակույթի և հայեցի կերպի պահպանումը, ազգային-մշակութային պաշտպանական կառույցների ստեղծումը հատկապես կարևոր են մեծ սփյուռք ունեցող հայության համար. օտար միջավայրում բազմաթիվ գործոնների ազդեցությամբ աշխարհասփյուռ հայությունը դժվար թե դիմակայեր ձուլմանն ու ազգային կերպի աղավաղմանը, եթե չունենար իր մշակույթի մեջ ամրակայված ազգային հոգեկերտվածքի խտացումը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1.Դաստիարակության նպատակն ու խնդիրները

Դաստիարակության խնդիրները վերաբերում են ամբողջ ազգին, պետությանը և հասարակությանը: Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանի որ կրթության գերնպատակը անձի կայացումն է՝ ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

Սույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ խնդիրները՝

- կրթության համակարգում արմատավորել ուսուցման աշակերտակենտրոն մեթոդներ, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընկերային հիմքի վրա, ընդլայնել դասղեկի ժամերի դաստիարակչական գործառույթը,
- դասղեկի ժամերի թեմատիկայի բովանդակությունը հարստացնել անձի և քաղաքացու ազգային-հոգևոր զարգացմանը միտված ուսումնական նյութերով,
- սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, ձևավորել դրանց համադրման և արժևորման կարողություններ,
- նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը՝ հայրենասիրության, հանդուրժողականության հիմքերի վրա,
- պայմաններ ստեղծել սովորողների անձնային զարգացման, ճանաչողական, գեղագիտական և հոգևոր պահանջմունքների բավարարման համար:

Դաստիարակության թիվ մեկ խնդիրը դպրոցում այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը կօգնի ձևավորել սովորողների արժեքային մի համակարգ, որով հնարավոր է հասարակության մեջ իրենց արժանի տեղ գտնել:

2.2. Սովորողների ազգային-հոգևոր դաստիարակության զարգացման միջոցները դասղեկի ժամերին

Դասղեկի գործառույթներից ամենաառաջնայինն ավանդաբար համարվել է սովորողների դաստիարակության գործառույթը: Այս տեսանկյունից դաստիարակությունը կարելի է դիտարկել որպես մարդու սոցիալականացման գործընթացի մանկավարժական բաղադրիչ, որը ենթադրում է անձի ձևավորման համար պայմաններ ստեղծելու նպատակաուղղված գործունեություն:

Դասղեկն է ծրագրում սովորողների բազմաբնույթ գործունեությունը՝ ճանաչողական, աշխատանքային, գեղագիտական, ինչպես նաև նրանց՝ դասերից դուրս ազատ փոխհարաբերվելը, ինչը դպրոցականների ժամանցի մաս է կազմում: Դասղեկը ձգտում է կանոնակարգել ներդասարանական փոխհարաբերությունները, խթանել առաջնորդության դրսևորումները, ձևավորել պատասխանատվության, փոխօգնության, համագործակցության ոգի: Այստեղ առավել կարևոր է կոլեկտիվ ստեղծագործական գործունեության ձևավորումը, դրա կիրառումն ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս:

Սովորողների դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է հաղորդակցման կուլտուրայի ձևավորումն աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց՝ ընկերների, ծնողների, ուսուցիչների, բարեկամների և այլոց, շրջակա միջավայրի՝ բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև հոգևոր արժեքների միջև:

Փորձը ցույց է տվել, որ վերոհիշյալ նպատակին հասնելու լավագույն միջոցը դասղեկի ժամերի ընձեռած հնարավորություններն են, դրանց շրջանակում կազմակերպվող խաղերը, թատերականցված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, ցուցահանդեսները և այլն:Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց շփան կուլտուրայի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնարտահայտման, ինքնագնահատման, ազգային-հոգևոր նկարագրի զարգացման հմտությունների մշակմանը: Սակայն, այս գործում հաջողելը մեծապես կախված է դասավանդող ուսուցիչների, դասղեկների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորվածությունից, հանրա-մշակութային իրազեկությունից, անձնային որակներից:

Դասղեկի աշխատանքը ենթադրում է նպատակաուղղված, համակարգված,

պլանավորված գործունեություն: Աշխատանքի պլանավորումը և համակարգված աշխատանքային պլանների կազմումը կարևոր է աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Աշխատանքային պլանը պետք է արծարծի դասղեկի գործունեության բոլոր ոլորտները և ուղղությունները, մանկավարժական բոլոր գործառույթները:

Դպրոցում, բացի ուսումնական դասընթացներից, ազգային-հոգևոր դաստիարակություն իրականացնելու համար մեծ հնարավորություն են ընձեռում դասղեկական ժամերը: Դասղեկի ժամը դպրոցականների կյանքում մեծ դեր կարող է խաղալ, եթե այն նպատակային ու հետաքրքիր է կազմակերպված: Յուրաքանչյուր դասղեկ ինքն է ընտրում դասղեկական ժամերի թեմատիկան, սակայն գաղտնիք չէ, որ որոշ դասղեկներ լուրջ չեն մոտենում դասղեկական ժամերի կազմակերպմանն ու անցկացմանը: Մինչդեռ դասղեկական ժամերին պետք է մանրակրկիտ պատրաստվել: Դպրոցում դասղեկի ժամն անցկացվում է շաբաթը մեկ անգամ: Որպեսզի դասղեկի ժամերը հետաքրքրեն բոլոր աշակերտներին, և նրանք ցանկություն հայտնեն մասնակցելու դրանց նախապատրաստման աշխատանքներին, կարելի է սովորողներին հայտնել դասղեկական ժամերի թեմաները և նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն տալ մասնակցելու այդ ժամերի նախապատրաստմանն ու անցկացմանը: Ապա աշակերտներն իրենց հավաքած նյութերը պետք է վերլուծեն դասղեկի հետ, մշակեն համապատասխան պլան: Ինչի՞ց սկսել. չէ՞ որ հայ ժողովուրդն աչքի է ընկնում ազգային արժեքների հարստությամբ: Դպրոցականի ազգայի-հոգևոր նկարագիրը ձևավորող ամենակարևոր հատկանիշներն են լեզուն, հավատը, սեփական ժողովրդի պատմության, գրականության իմացությունը, նրա պատմաճարտարապետական հուշարձանների ճանաչումն ու արժևորումը: Անձի հոգևոր զարգացման, գեղագիտական իդեալների, ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում մեծ դեր են խաղում նաև հայկական ժողովրդական և հոգևոր երգերը, ազգային պարերը, ծեսերը, տոներն ու ավանդույթները, հայրենի բնությունն ու էկոլոգիական դաստիարակությունը: Որպեսզի հայ դպրոցականը գիտակցի և որպես մնայուն ազգային արժեք ճանաչի մայրենին, անհրաժեշտ է տարեցտարի խորացնել մայրենի լեզվի և սուրբ հավատի ոգեղեն արժեքների մասին գիտելիքները՝ նորանոր տեղեկությունների ու փաստերի զուգորդումներով:

«Հայ գրերի գյուտը և Մեսրոպ Մաշտոցը» թեմայի ուսումնասիրությունը պահանջում է տարբեր տեղեկատվական աղբյուրներից անհրաժեշտ նյութերի որոնում և համադրում, որը կատարվելու է բացառապես աշակերտների ջանքերով, որպեսզի նրանք նաև ստանան գեղագիտական հաճույք, երկյուղածությամբ լցվեն ամեն մի նյութի մեջ մայրենիի հանդեպ հայոց մեծերի ցուցաբերած սիրո ու պաշտամունքի, գնահատանքի ու մեծարման ազնիվ մղումների նկատմամբ: Մեր նախնիները տառերի ստեղծման մեջ հրաշք են տեսել, իսկ գիրն ստեղծող հայրենանվեր գործչին փառավորել սրբի լուսապսակով: Այս թեմայով դասղեկական ժամերի ընթացքում անհրաժեշտ է հատվածներ ընթերցել Կորյունի «Վարք Մաշտոցի» երկից, Լեոյի «Մեսրոպ Մաշտոց» աշխատությունից, Պ. Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմից, «Թրի դեմ գրիչ» հոդվածից, Մ. Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքից, Արա Աբգարյանի «Անդորրության արարիչը» աշխատությունից և այլն, արտասանել հայ գրողների՝ Մաշտոցին ու մայրենի լեզվին նվիրված ասույթներ, բանաստեղծություններ»:[4]

Չպետք է մոռանալ նաև հոգևոր դաստիարակության մասին: Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել քրիստոնեական պատվիրաններին. այդ պատվիրանները բարոյականության դասեր են տալիս, ձևավորում են հոգևոր բարձր հատկանիշներ: «Աստվածաշունչը» ամեն մի քրիստոնյայի կյանքի դասագիրքը պիտի լինի, ուստի կարևոր է, որ բոլոր աշակերտները ընթերցեն այն, դարձնեն իրենց հոգու ուղեցույցը: Դաստիարակչական առումով չափազանց ուսանելի են աստվածաշնչյան առակները. կարելի է մի ամբողջ դասղեկական ժամ նվիրել դրանց ուսումնասիրությանը: Ուսուցիչը դասարանը կարող է բաժանել 2-3 հոգանոց խմբերի՝ յուրաքանչյուր խմբի հանձնարարելով աստվածաշնչյան մի քանի առակ: Աշակերտները պետք է պատմեն առակները, բացատրեն այլաբանական իմաստը, մատնանշեն ուսանելի հատվածները: Արժեքային համակարգ են ձևավորում մեր պատմական հուշակոթողները՝ Էջմիածնի Մայր տաճարը, Գառնին ու Գեղարդը, Նորավանքն ու Խոր Վիրապը, Սարդարապատի հուշահամալիրն ու Սաղմոսավանքը, Նոր Ջուղայի եկեղեցիներն ու Աղթամարա

4. Տե՛ս Մկրտչյան Տ., «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 5. 2011թ., էջ 20:

վանքը, հայ ժողովրդի հոգևոր հարստության ամենամեծ վկան՝ Մատենադարանը: Առանձին դասղեկական ժամեր կպահանջվեն այս և մյուս կարևոր պատմաճարտարապետական հուշարձանների մասին տեղեկություն-ների պատրաստման և յուրացման համար: Որպես ազգային գիտակցությունը կազմավորող հիմնաքար՝ դպրոցականի արժեքային համակարգի ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ նաև մեր մեծ հայրենասերների՝ Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Թևանի և շատ ուրիշների ապրած կյանքն ու գործունեությունը, Արցախյան պատերազմում անմահացած հերոսների հավերժող օրինակները: Ուսանելի է Ա. Ղանալանյանի «Ավանդապատումից» հատվածներ ընթերցել Դավիթ Բեկի և հայ ազգային այլ հերոսների, ֆիդայիների մասին:

Սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր միջոց է մեր պետության խորհրդանշանների՝ գերբի, դրոշի, օրհներգի, զինանշանի ստեղծման պատմության իմացությունը: Դասղեկական ժամերից մի քանիսն էլ կարելի է նվիրել «Հայկական ազգային նվագարաններ», «Հայ ժողովրդական երգեր», «Հոգևոր երաժշտություն և պատարագ», «Շարական-ներ», «Ազգային պարեր» թեմաների ուսումնասիրմանը:

Չի կարելի պատկերացնել հոգևոր դաստիարակություն առանց ազգային ակունքներից բխող մաքուր, զուլալ մեղեդիների: «Հայկական ազգային նվագարաններ» թեմայով դասղեկի ժամի ընթացքում աշակերտները կծանոթանան ազգային նվագարաններին, կունկնդրեն դուդուկի մեղեդիներ, հայկական ռիթմիկ պարեղանակներ՝ ավանդական զուռնա-դհոլով:

«Հայ ժողովրդական երգեր» թեման անցնելիս աշակերտները հնարավորու-թյուն կունենան ծանոթանալ ժողովրդական երգարվեստին, իրենց դուր եկած երգերի տեքստերն, անշուշտ, անգիր կսովորեն և կկատարեն դասարանով:

«Հոգևոր երաժշտություն և պատարագ», «Շարականներ» թեմաներն ուսում-նասիրելիս կարելի է այցելել էջմիածնի Մայր տաճար՝ ներկա գտնվելու պատարագի արարողությանը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մակար Եկմալյանն ու Կոմիտասը ուղենշեցին հայ ազգային երգի հետագա ընթացքը՝ հենվելով հոգևոր և ժողովրդական երգարվեստի հազարամյա ավանդույթների վրա: Նրանք մշակեցին հայ հոգևոր երաժշտությունը: Եկմալյանի ու Կոմիտասի հանճարով համաշխարհային ճանաչման հասավ հայոց

պատարագը, որը դարեր շարունակ հանդիսացել է հայկական ազգային օպերան, և որի գեղարվեստական արժեքն անհամեմատ բարձր է նրա կրոնական նշանակությունից: Հին և միջնադարյան հայկական երաժշտությունը հայ մշակույթի ամենահարուստ բնագավառներից է: Շատ կողմերով այն բացառիկ է նաև համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Ուստի չպետք է վարանել աշակերտներին ծանոթացնելու հոգևոր երաժշտության գանձերին՝ սեր և հետաքրքրություն առաջացնելով դեպի հոգևոր երգն ու երաժշտությունը: Մեր հոգևոր երգերը՝ շարականները, հորինվել են երգելու համար: Ազգային հոգեկերտվածքի ձևավորման գործում կարևոր է ազգային-հոգևոր շարականների գեղեցիկ նմուշների ուսուցումը հղկված, մաքուր հայերենով: Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Հովհաննես Օձնեցին, Ն. Շնորհալին, Հովհաննես Երզնկացին և շատ ուրիշներ բազմաթիվ շարականների հեղինակներ են, որոնց ուսումնասիրությանը, լավագույն նմուշների անգիր իմացությանը դասղեկը պետք է նվիրի առանձին դասղեկական ժամեր: Այս թեմաներն անցնելիս ուշագրավ են Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի «Մեր պատարագը» գրքից հատվածների դասարանական ընթերցումները:

«Ազգային պարեր» թեմայով դասղեկական ժամին հարկ է մի փոքր երկար նախապատրաստվել: Դասղեկը, հնարավորության սահմաններում, կարող է համագործակցել պարուսույցի հետ, որ նախօրոք աշակերտներին կսովորեցնի մի քանի ազգային պարեր, կխոսի ազգագրական պարարվեստի մասին: Բացի այդ՝ աշակերտները կարող են դիտել հայ ազգային պարերը՝ պարային տարբեր համույթների կատարմամբ: Թեման հնարավորություն է ընձեռում խոսելու նաև ազգային տարազի ստեղծման և նրա առանձնահատկությունների մասին:

Ազգային-հոգևոր զարգացման հզոր միջոց է նկարչությունը: Հարկավոր է դպրոցականներին հաղորդակից դարձնել դրան՝ հայ հանճարեղ նկարիչների գործերն ուսումնասիրելով: Այդ նպատակով ուսուցիչն իր ձեռքի տակ պետք է ունենա բազմաթիվ նկարներով, անվանի նկարիչների կենսագրական տեղեկություններով հագեցած ալբոմ: Աշակերտները կծանոթանան այդ ալբոմի պարունակությանը և իրենք ևս կփորձեն այդպիսի ալբոմներ պատրաստել: Նմանատիպ դասղեկական ժամերից հետո, երբ աշակերտները պատկերացում

կկազմեն և որոշակի գիտելիքներ կունենան հայ նկարիչների և նրանց գործերի մասին, ցանկալի է այցելել նաև Ազգային պատկերասրահ:

Ազգային ինքնագիտակցության զարգացման առանձնահատուկ միջոց են ազգային արհեստները՝ փայտափորագրությունը, մետաղամշակումը, արծաթագործությունն ու ոսկերչությունը, գորգագործությունն ու ասեղնագործությունը: Առանձին դասղեկական ժամեր կարելի է նվիրել այս թեմաների ոչ միայն ուսումնասիրմանը, այլև գործնական կիրառմանը՝ զուգահեռաբար կազմակերպելով ցուցահանդեսներ, որտեղ կներկայացվեն աշակերտների լավագույն աշխատանքները:

Հաշվի առնելով տոների դաստիարակիչ և համախմբիչ նշանակությունը՝ կարելի է «Ազգային տոներ» խորագրով միամսյակ կազմակերպել՝ հրավիրելով ուսուցիչների, ծնողների, այլ դասարանների աշակերտների: Ամեն շաբաթ ներկայացնելով որևէ ազգային տոն՝ աշակերտները կփորձեն վերակենդանացնել հազարամյակների խորքից եկող հայ ազգային տոները՝ պահպանելով դրանց ավանդական խորհուրդը: Տոների ժամանակ պատրաստվող համադամ կերակուրներով աշակերտները կհյուրասիրեն ներկաներին՝ դրանով շեշտելով հայ ասպնջական օջախում հյուրին միշտ սրտաբաց ընդունելու և պատվելու սովորությունը:

Որպես ազգային ինքնագիտակցությունը կազմավորող հիմնաքար՝ դպրոցականի արժեքային համակարգի վերջնական ձևավորման գործում մեծ են նաև բնության ու էկոլոգիական դաստիարակության հարցերը: «Բնությունը անձի հոգեկերտվածքի ձևավորման, ներաշխարհի հարստացման հզոր ակունք է, ոգեշնչման աղբյուր: Բնության պահպանումն ինքնին մարդու պահպանման գործընթաց է, քանզի մարդը բնության անբաժանելի մասն է: Կենդանի բնության և շրջակա միջավայրի հանդեպ սիրո սերմանումը էկոլոգիական դաստիարակության հիմքն է: Որպեսզի դպրոցականը սիրի բնությունը, շրջապատող աշխարհը, ուշադիր և հոգատար կլինի նրա նկատմամբ, հարկավոր է հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ, զբոսանքներ, շրջագայություններ բնության գրկում, որի ժամանակ դպրոցականների մեջ անհրաժեշտ է սերմանել ակնածանքի, հպարտության զգացում Արարատ լեռան, Մայր Արաքսի, Սրբազան Արածանիի, հայոց խաչքարերի, մամռակալած վանքերի ու եկեղեցիների հանդեպ: Կարևոր է նաև էկոլոգիական դաստիարակության

ազգային-հայրենասիրական կողմիապ ահովումը: Ուսուցիչն աշակերտների մեջ հետևողականորեն պիտի ձևավորի այն համոզմունքը, որ պահպանել բնությունը նշանակում է պահպանել հայրենիքը: Չէ՞ որ յուրաքանչյուր մարդու համար հայրենիքի գաղափարը կապված է հայրենի բնության հետ: Բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու համար անհրաժեշտ է նաև, որ աշակերտները դասղեկական ժամերի ընթացքում ընթերցեն դասղեկի կողմից նախօրոք ընտրված գեղարվեստական ստեղծագործություններ, դիտողական օրինակների վրա հասկանան, թե բնության մեջ ինչն է կարելի, ինչը՝ ոչ»:[5]

Մարդ-բնություն հարաբերակցության գաղափարն է շոշափված Համաստեղի «Չալոն» պատմվածքում,Անտուան դը Սենտ էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» վիպակում, Հ. Սահյանի, Մ. Գալշոյանի, Հր. Մաթևոսյանի բնափիլիսոփայական ստեղծագործություններում:

Կիսամյակի ավարտին կամ տարեվերջին ցանկալի է կազմակերպել հայրենասիրական զանազան միջոցառումներ, հանդիպումներ Արցախյան հերոսամարտի մասնակիցների հետ, անցկացնել երաժշտական երեկոներ, զեկուցումներ, դասախոսություններ, բանավեճեր արվեստի և գրականության վերաբերյալ՝ ի մի բերելով դասղեկական ժամերին ստացած գիտելիքները:

Դպրոցականների ազգային-հոգևոր դաստիարակության զարգացման միջոցները բավական շատ են ու բազմազան: Եթե դրանք ճիշտ ու փոխկապակցված օգտագործվեն, ապա դասղեկի ժամերը կդառնան և՛ հետաքրքիր, և՛ կնպաստեն դպրոցականների ազգային-հոգևոր նկարագրի զարգացմանը:

---

5. Տե՛ս Մկրտչյան Տ. , «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 5. 2011թ., էջ 22:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դաստիարակության բովանդակության մեջ ազգային-հոգևոր բաղադրատարրի շեշտադրումը նշանակում է դպրոցականների մեջ ձևավորել իր ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ հարգանք, միջազգային հարաբերությունների մշակույթ, ազգային ինքնագիտակցություն և արժեհամակարգ՝ համաշխարհայնացման արդի գործընթացներում ազգային դիմագիծը պահպանելու և համամարդկային արժեքները գնահատելու համար:
2. Դպրոցականների ազգային-հոգևոր դաստիարակության միջոցներն են ուսումնական դասընթացների հնարավորությունների և դասղեկի ժամերի թեմատիկայի նպատակային օգտագործումը՝ ինտեգրման և համապատասխան մեթոդների ու ձևերի կիրառմամբ, ինտերակտիվ հաղորդակցական միջավայրը, տեղեկատվական աղբյուրներով ինքնուրույն աշխատանքի համար հետազոտական կարողությունների զարգացումը, այցելությունները մշակութային օջախներ և պատմաճարտարապետական վայրեր, էթնոմանկավարժական գաղափարների շեշտադրումը, ազգային ու համաշխարհային մշակութային արժեքների ճանաչումն ու գնահատումը տարաբնույթ միջոցառումների, իմացական խաղերի ընթացքում:
3. Ազգային-հոգևոր դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է դասավանդող ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորվածությունից, հանրամշակութային իրազեկությունից, խոսքի մշակույթից, անձնային որակներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Հ.Ա., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, -Եր.: Նոյյան Տապան,1997, -72 էջ:
2. Ընդհանուր հոգեբանություն (պրոֆ. Ա.Վ. Պետրովսկու խմբագրությամբ), -Եր.: Լույս, 1974, - 543 էջ:
3. Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (5-18-րդ դարեր),-Եր.: Երևանի համալսարանի հր., 1976, - 576 էջ:
4. Հայ մանկավարժներ (կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա. Շավարշյան), Գիրք Ա, - Եր.: Հայպետուսմանկհրատ., 1958, - 619 էջ:
5. Մկրտչյան Տ. , «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 5. 2011թ.:
6. Պլատոն, Երկեր չորս հատորով, հատոր IV, -Եր .: Անտարես հր., 2017, 440 էջ:
7. Փիլիսոփայական բառարան (Մ.Մ. Ռոզենտալի խմբագրությամբ),-Եր.: Հայաստան, 1975, -467 էջ:
8. Ананьев Б.Г. Человек как предмет познания / Б.Г.Ананьев.-М.: Наука,2000. - 351 с.